ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԵՆՏՐՈՆԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԻՍՏ ԿՐԵՏԵՌԻՄ

Օգոստոսի 28-ից սեպտեմբերի 5-ը Կրետեում տեղի ունեցավ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Կենտրոնական կոմիտեի նիստը, որի օրակարգի հիմնական նյութը 2013 թ. աշնանը Հարավային Կորեայի Բուսան քաղաքում տեղի ունենալիք ԵՀԽ գլխավոր համաժողովն էր: Համաժողովն անցկացվելու է «Կյանքի Ապված, ցույց տուր մեզ արդարության եւ խաղաղության ճանապարհը» խորագրի ներքո:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ ժողովին մասնակցեցին ԵՀԽ Գործադիր կոմիտեի անդամ Վիգեն արքեպիսկոպոս Այքազյանը եւ ԵՀԽ Կենտրոնական կոմիտեի անդամ Փոլա Տեր-Մաթոյանը:

Ժողովի ավարտին տեղի ունեցավ հանդիպում ԵՀԽ Կենտրոնական կոմիտեի Ուղղափառ անդամների եւ Գլոբալ քրիստոնեական ֆորումի ներկայացուցիչների միջեւ, որտեղ տեղեկություններ փոխանցվեցին Գլոբալ քրիստոնեական ֆորումի գործունեության եւ հետագա զարգացման մասին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԶՈՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՅՆ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Սեպտեմբերի 1-ին Հունգարիայի առաջնորդ, Հունգարիայի Կաթոլիկ եպիսկոպոսների համագումարի նախագահ Կարդինալ Փիթեր Էրդոն Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսին ուղղված գրությամբ զորակցություն է հայտնել հայ ժողովրդին Ադրբեջանի ԶՈՒ սպա Սաֆարովի՝ Հունգարիայի իշխանությունների կողմից արտահանձնման եւ Ադրբեջանի նախագահի կողմից նրան ներում շնորհելու առնչությամբ:

Հանուն Հունգարիայի Կաթոլիկ եպիսկոպոսների համագումարի Կարդինալ Էրդոն դատապարտել է նաեւ ազգային պատկանելության հողի վրա իրականացվող բռնությունն ու ատելությունը՝ հայցելով, որ Բարձրյալն Ապված պահպանի համայն հայ ժողովրդին եւ օրհնի արդարության ու խաղաղության շնորհներով:

Արձագանքելով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կոչին՝ ցավալի երեւույթի առիթով Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի եւ անդամ 349 Եկեղեցիների անունից Հունգարիայի իշխանություններին իր վրդովմունքն է արտահայտել Խորհրդի Գլխավոր քարտուղար դոկտոր Օլավ Տվեյթը: Անդրադառնալով Հունգարիայի եւ Ադրբեջանի ձեռնարկած մտահոգիչ քայլերին՝ ԵՀԽ-ն դատապարտել է բոլոր այն գործողությունները, որ կոպտորեն խաթարում են խաղաղությունը եւ արդարությունը տարածաշրջանում:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ
ՍԻՐԻԱՅՈՒՄ ԶՈՀՎԱԾՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Սեպտեմբերի 2-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Ս. Պատարագի ավարտին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ կատարվեց հոգեհանգստյան արարողություն՝ Սիրիայի Արաբական Հանրապետությունում ռազմական գործողությունների հետեւանքով զոհված հայորդիների եւ հավատակիցների համար:

Ս. Պատարագին եւ հոգեհանգստին ներկա էին Հայաստանի Հանրապետությունում Սիրիայի գործերի ժամանակավոր հավատարմատար, լիազոր նախարար Մաամուն Ալ-Հարիրին, սիրիահայ համայնքի ներկայացուցիչներ եւ ուխտավորներ:

Մինչ արարողությունը Սիրիայում տիրող կացությանն ու սիրիահայ համայնքին անդրադարձավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանը՝ ցավ արտահայտելով Սիրիայում շարունակվող հակամարտության առիթով եւ հանուն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանության ցավակցություն հայտնելով զոհվածների ընտանիքներին ու հարազատներին: «Հայ Առաքելական Եկեղեցին, որ Քրիստոսի խաղաղության Ավետարանի քարոզիչն է, մշտապես երկխոսության եւ համերաշխության կոչով է հանդես գալիս», - ասաց Սրբազան Հայրը՝ընդգծելով Մայր Աթոռի եւ Դամասկոսի հայոց թեմի կողմից Սիրիայի ժողովրդին աջակցելուն ուղղված քայլերը եւ ձեռնարկված միջոցառումները:

Հոգեհանգստյան պաշտոնի ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանում Սիրիայի գործերի ժամանակավոր հավատարմատարին: Զրույցի ընթացքում Նորին Սրբությունն անդրադարձավ Սիրիայում տարբեր կրոնների ու մշակույթների խաղաղ ու համերաշխ գոյակցության հարուստ պատմությանը՝ գոհունակությամբ հիշատակելով հայ համայնքի նկատմամբ դարերի ընթացքում եւ մասնավորապես ցեղասպանության օրերին Սիրիայի իշխանությունների եւ ժողովրդի դրսեւորած եղբայրական հոգատար վերաբերմունքը: Իր մտահոգությունն արտահայտելով Սիրիայում ստեղծված իրավիճակի առիթով՝ Վեհափառ Հայրապետը կարեւորեց Սիրիայում խաղաղության, ներքաղաքական կայունության ու հասարակական համերաշխության շուտափույթ հաստատումը: Ամենայն Հայոց Կաթողիկոսը նաեւ հույս հայտնեց, որ Բարձրյալի օգնականությամբ Սիրիայի ժողովուրդը կհաղթահարի ներկայիս դժվարությունները եւ կվերադառնա իր կյանքի բնականոն ընթացքին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀՈՒՆԳԱՐԻԱՅԻ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ ԵՆ

Սեպտեմբերի 2-ին Հունգարիայի ավետարանական համայնքերն իրենց սրտակցությունն են հայտնել հայ ժողովրդին՝ ցավ արտահայտելով Հունգարիայի կողմից Ադրբեջանի ԶՈՒ սպա Ռամիլ Սաֆարովի արտահանձնման եւ Ադրբեջանում ազատ արձակման առնչությամբ:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսին ուղղված Հունգարիայի Լյութերական եկեղեցու առաջնորդ եպիսկոպոս Փիթեր Գանցի եւ

Հունգարիայի Ռեֆորմիատական եկեղեցիների խորհրդի նախագահ եպիսկոպոս Գյուսթավ Բյոլցկեի գրության մեջ ասվում է. «Հավատում ենք, որ միայն Աստված է արդարորեն դատում մեզ բոլորիս եւ Նրա առջեւ է, որ պետք է բոլորս մի օր կանգնենք: Սակայն պետությանն է տրված իշխանությունն ու պատասխանատվությունը ծառայելու եւ պաշտպանելու հասարակությանը. այսպիսով՝ հանցագործներին թողնել ազատությունը վայելել՝ Աստծու պատվիրանին դեմ է: Մենք լիովին հասկանում ենք ներման՝ դատապարտելի քայլի առնչությամբ հայ ժողովրդի վրդովմունքը եւ մեր ժողովրդի անունից հայտնում մեր համերաշխությունը»:

Անհանդուրժելի նկատելով հանցագործի ազատ արձակումը՝ Հունգարիայի ավետարանական հարանվանությունները հույս են հայտնել, որ արդարությունը կվերականգնվի:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԹԵՄԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 145 -ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎ

Սեպտեմբերի 3- ին Սոֆիայի Ջինվորական պալատի սրահում տեղի ունեցավ Բուլղարահայոց թեմի հիմնադրման 145-ամյակին նվիրված գիտաժողով: Նախադեպը չունեցող գիտաժողովն անցավ թեմի առաջնորդական տեղապահ Տ. Աբգար վրդ. Հովակիմյանի նախագահությամբ, ներկա էին ՀՀ մշակույթի նախարար Տիկին Հասմիկ Պողոսյանը, Բուլղարիայում ՀՀ դեսպան Տիար Արսեն Սհոյանը, Քույր եկեղեցիների, Քրիստոնեական այլ հարանվանությունների, մահմեդական ու հրեական համայնքների ներկայացուցիչներ, Բուլղարիայի ԳԱ ակադեմիկոսներ, հայ եւ օտարազգի գիտնականներ :

Գիտաժողովը աղոթքով սկսելով՝ Հոգեշնորհ Աբգար վարդապետը ողջուեց ներկաներին ու հանդես եկավ բացման խոսքով: Այնուհետեւ ողջույնի խոսք ասացին Տիկին Պողոսյանն ու Պարոն Սհոյանը:

Ներկայացված զեկույցներով ու քննախոսություններով անդրադարձ կատարվեց Բուլղարահայ համայնքի առաջացմանը, Բալկաններում հայկական ներկայությանը, Բուլղարահայոց թեմի հիմնադրման նախադրյալներին, Բուլղարիայի ու բուլղար ժողովրդի հասարակական, քաղաքական եւ մշակութային կյանքում հայ համայնքի դերակատարությանը, հայ-բուլղարական հարաբերությունների առանձնահատկություններին:

Գիտաժողովն ընթացավ հագեցած ծրագրով եւ ներկաների գործուն մասնակցությամբ:

Երեկոյան՝ գիտաժողովի փակումից հետո, մասնակիցներն այցելեցին կառուցման փուլում գտնվող Սոֆիայի Ս. Աստվածածին Եկեղեցի:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ
Ս. ԵԿԵՂԵՑԻՈՅ ՊՈՒԼԿԱՐԻՈՅ ԹԵՄ

ԴԻՄԱՆ ԳԵՐՄԱՆՋՈՅ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՏԵՂԵԿԱԳՐՈՒԹԻՒՆ
3 սեպտեմբեր

Գերմանիոյ Հայոց առաջնորդ Բարձր. Տ. Գարեգին արքեպ. Պեքճեանը այսօր նամակով դիմել է Գերմանիոյ Դաշնային Հանրապետութեան վարչապետ Տիկ. Անգելա Մերքէ-

լին, արտգործնախարար Դրն. Գուիդո Վեսթերվելէին, Կաթողիկէ Եկեղեցու Եպիսկոպոսաց ժողովին, Աւետարանական Եկեղեցու Խորհրդին, Ուղղափառ Եկեղեցիների Եպիսկոպոսաց ժողովին եւ Գերմանիոյ միջեկեղեցական շարժման նախագահութեան, որոնցում նա իր մտահոգութիւնն է յայտնում հայոց բանակի սպայ Գուրգէն Մարգարեանին կացնահարած ադրբեջանցի մարդասպանի Հունգարիայից Ադրբեջան արտայանձնման եւ Ադրբեջանի կողմից նրան ներում շնորհելու առընչութեամբ:

Գերմանական իշխանութեան բարձրաստիճան ներկայացուցիչներին ուղղուած իր նամակում առաջնորդ Սրբազանը ի մասնաւորի գրում է. "Հունգարական իշխանութիւնների այս քայլը շատ խնդրայարոյց է եւ անհամատեղելի Եւրոպական Միութեան բարոյական չափանիշների հետ: Գերմանահայ հանրութիւնը չափազանց մտահոգ է Հունգարիայի նմանատիպ ոչ ընդունելի գործելակերպից: Յանուն Գերմանիայում բնակուող բազմահազար հայազգի քաղաքացիների եւ մեր Եկեղեցու զաւակների, խնդրում եմ հրապարակել գերմանական կառավարութեան պաշտօնական հաղորդագրութիւնը այս առընչութեամբ:

Միաժամանակ խնդրում եմ Ձեզ, ադրբեջանական իշխանութիւններից պահանջել՝ յարգել իր պարտաւորութիւնները եւ զերծ մնալ միջազգային իրաւական համակարգի նկատմամբ ցուցաբերուող արհամարհանքից: Այսպիսի գործելակերպը ծանրացնում է տարածաշրջանի քաղաքական առանց այն էլ խրթին կացութիւնը եւ չափազանց վնասակար ազդեցութիւն կ՚ունենայ Լեռնային Ղարաբաղի խնդրի խաղաղ կարգաւորման լուծման փնտռտուքների վրայ":

Իսկ քոյր եկեղեցիների առաջնորդներին եւ միջեկեղեցական շարժման պատասխանատուներին գրած նամակում, Գարեգին Սրբազանը նշում է. "Աշխարհասփիւռ հայութիւնը չափազանց մտահոգ է Հունգարիայի նմանատիպ ոչ ընդունելի գործելակերպից: Հայաստանը որպէս առաջին քայլ խզել է իր դիւանագիտական յարաբերութիւնները Հունգարիայի հետ: Հայ Եկեղեցին նոյնպէս դատապարտել է հունգարական եւ ադրբեջանական իշխանութիւնների այս անընդունելի գործելակերպը: Եկեղեցիների Համաշխարհային Խորհուրդը, Հունգարիայի Կաթողիկէ եպիսկոպոսաց ժողովը եւ բողոքական երկու մեծ եկեղեցիները Նորին Սրբութիւն Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին ուղղեալ պաշտօնական նամակներով դատապարտել են այս քայլը եւ համերաշխութիւն յայտնել Հայ Եկեղեցուն եւ մեր ժողովրդին:

Մենք ուրախ կը լինէինք, եթէ Դուք էլ մի համապատասխան պաշտօնական յայտարարութեամբ դատապարտէիք այս գործելակերպը եւ արդարութեան ու բարոյական չափանիշների ոտնահարումը: Այսպիսի քայլերը բացասաբար են անդրադառնում խաղաղութեան հասնելու առանց այն էլ փխրուն գործընթացի վրայ եւ բարդացնում են Լեռնային Ղարաբաղի խնդրի խաղաղ լուծման փնտռտուքները:

Միաժամանակ խնդրում ենք Ձեզ, մեզ յիշել Ձեր աղօթքներում եւ աղօթել տարածաշրջանի խաղաղութեան համար":

ԴԻՒԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

«ՖՈԿՈԼԱՐԵ» ՇԱՐԺՄԱՆ ԲԱՐԵԿԱՄ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻ 31-ՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ ԿԱՀԻՐԵՈՒՄ

Սեպտեմբերի 3-7-ը Կահիրեում (Եգիպտոս) «Հանդիպիր հարեւանիդ սիրով» խորագրի ներքո տեղի ունեցաւ Կաթոլիկ Եկեղեցու ծոցում ծնունդ առած «Ֆոկոլարե» շարժման բարեկամ եպիսկոպոսների 31-րդ էկումենիկ համաժողովը:

Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ. Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ ժողովին մասնակցեց Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ Տ. Աշոտ եպիսկոպոս Մնացականյանը:

Համաժողովին քննարկվեցին Եգիպտոսի կրոնական, քաղաքական իրադրությանը եւ միջկրոնական երկխոսության անհրաժեշտությանն առնչվող խնդիրներ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀՆԴԿԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՈՂՈՔՆ ԸՆԴԴԵՄ ՀՈՒՆԳԱՐԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

2012 թ. սեպտեմբերի 4-ին Հնդկաստանի հայ համայնքն իր ընդվզումն ու բողոքի ձայնը բարձրացրեց Կալկաթայում Հունգարիայի հյուպատոսության առջեւ՝ Հունգարիայի իշխանությունների կողմից Ռամիլ Սաֆարովին պաշտոնական Բաք-վին անօրինական արտահանման եւ Ադրբեջանի նախագահի կողմից նրան ազա-տություն շնորհելու համար: Համայնքի կողմից բողոքի նամակ հանձնվեց Կալկաթա-յում Հունգարիայի հյուպատոսությանը:

Հնդկահայոց հոգեւոր հովիվ, Հայոց մարդասիրական ճեմարանի կառավարիչ Հո-գեշնորհ Տեր Խորեն վարդապետ Հովհաննիսյանն իր նամակում ի մասնավորի գրել է. «Մարդկային կյանքն ապրվածապարգեւ է: Կանխամտածված սպանությունը հան-ցանք է մարդկության եւ Աստծո դեմ: Հանուն հնդկահայության մենք պահանջում ենք, որ Հունգարիայի կառավարությունը ներողություն խնդրի հունգարական դատարանի կողմից ցմահ դատապարտված դաժան մարդասպանի ազատության մեջ հայտնվե-լու համար: Այս անընդունելի որոշումը ոտնահարում է մարդու իրավունքները, ար-դարությունը, մարդակային արժանապատվությունը եւ մերժում է ապրվածային օրեն-քը երկրի վրա»:

Նամակը հյուպատոսին հանձնելիս Հայր Խորենն իր խորը վրդովմունքը հայտնեց եւ ասաց, որ եթե վերջինս այս անարդար արտահանման դեմ ընդվզի եւ, ի նշան բո-ղոքի, հրաժարական տա, ապա կդառնա իր հերոսը:

Ռամիլ Սաֆարովը 2006 թ. հունգարական դատարանի կողմից դատապարտվել էր ցմահ բանտարկության՝ 30 տարի առանց ներման իրա-վունքի: Ազերի մարդասպանը 2004 թվականին առանձնակի դաժանությամբ կացնով սպանեց հայկական բանակի սպա 26-ամյա Գուրգեն Մարգարյանին քնած ժամա-նակ: Նրանք երկուսն էլ Հունգարիայի մայրաքաղաք Բուդապեշտում մասնակցում էին Հյուսիսատլանտյան դաշինքի «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագ-րի շրջանակներում անգլերենի դասընթացներին:

Դատավարությունը բացահայտեց, որ Գուրգեն Մարգարյանը առանձնակի դաժանությամբ սպանվել է միայն հայ լինելու պատճառով: Մարդասպանը խոստովանեց իր հանցանքը, բայց երբեք չզղջաց:

ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆ

ԲՈՂՈՔԻ ՅՈՒՅՑ ԲՈՒԼՂԱՐԻԱՅՈՒՄ ՀՈՒՆԳԱՐԻԱՅԻ ԴԵՍՊԱՆԱՏԱՆ ԴԻՄԱՑ

Սեպտեմբերի 4- ին Բուլղարահայոց թեմի առաջնորդական տեղապահ Հոգեշնորհ Տ. Աբգար վրդ. Հովակիմյանի առաջնորդությամբ Հայկական համայնքն իր լրակազմով բողոքի ակցիա է անցկացրել Բուլղարիայում Հունգարիայի դեսպանատան դիմաց, որի ժամանակ Հունգարիայի կառավարության՝ առողջ բանականության քննությանը չդիմացող քայլը դատապարտող նամակ ներկայացվեց:

Բողոքի ցույցը հնդկահայ համայնքում

Ցույց Սոֆիայում Հունգարիայի դեսպանատան մոտ

Հունգարիայի դեսպանատանը փոխանցած բողոքագրում առանձնապես շեշտված էին Հունգարական կառավարության կողմից միջազգային նորմերով առաջնորդված լինելու իր մեկնաբանությունների հիմնազուրկ լինելը, Արդարության դեմ հունգարական կառավարության բացահայտ մեղանչման փաստը, իր դավանած սեփական սկզբունքների հանդեպ անհավատարմությունն ու Հայ ազգի՝ հունգար ժողովրդին մատուցած ծառայությունների ու Հունգարիայի պետականությանը բերած նպաստի նկատմամբ գործող իշխանությունների անշնորհակալ կեցվածքը :

Բողոքի ակցիայի ընթացքում Հայ համայնքին սատարում էր բուլղարական «Ատակա» ազգային կուսակցությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ
Ս. ԵԿԵՂԵՑԻՈՑ ՊՈՒԼԿԱՐԻՈՑ ԹԵՄ

20-ՐԴ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԷԿՈՒՄԵՆԻԿ ԿՈՆՖԵՐԱՆՍԸ ԻՏԱԼԻԱՅԻ ԲՈՉԵ ՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐՈՒՄ

Սեպտեմբերի 5-8-ը՝ Իտալիայի Բոզե վանական համալիրում «Մարդն իբրև արարչագործության պահապան» խորագրի ներքո տեղի ունեցավ 20-րդ միջազգային էկումենիկ կոնֆերանսը, որին մասնակցում էին բազում ներկայացուցիչներ Ուղղափառ, Արևելյան Ուղղափառ եւ Կաթոլիկ եկեղեցիներից, ինչպես նաեւ գիտնականներ տարբեր կրթական հաստատություններից:

Ն.Ս.Օ.Տ.Տ Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ կոնֆերանսին մասնակցեց Միլանի հոգեւոր հովիվ Տ. Թովմա աբեղա Խաչատրյանը, որն ընթերցեց Հայոց Հայրապետի օրհնության խոսքը:

«Ստեղծ անսահման սիրո դրսեւորումն էր արարչագործությունը: Իբրեւ Ստեղծ պատկերով եւ նմանությամբ ստեղծված բանական էակի՝ Ստեղված մարդուն զարդարեց Սուրբ Հոգու զանազան շնորհներով եւ մեծ պատասխանատվություն դրեց նրա վրա՝ պահապանը դառնալու ողջ արարչագործության, մշտական խնամք եւ հոգածություն ցուցաբերելու արարչաստեղծ բնության հանդեպ, խելամտորեն եւ զգուշորեն օգտվելու նաեւ բնության բարիքներից:- Արդի մարտահրավերներից է բնության պահպանումը աշխարհի եւ գալիք սերունդների մասին մտահոգությամբ: Ուստի մեծապես կարեւոր է մարդու մեջ արթուն պահել բնության հանդեպ Արարչից նրան տրված պատասխանատվությունը՝ խուսափելու համար երկիր մոլորակին սպառնացող բնապահպանական աղետներից, համատեղ ջանքերով կառուցելու բարօր ու առաջագնա կյանքը համայն մարդկության»,- նշվում է Վեհափառ Հայրապետի խոսքում:

Կոնֆերանսի ընթացքում բանախոսները եւ ներկաները Սուրբ Գրքի եւ հայրաբանական ժառանգության տեսանկյուններից անդրադարձան արարչագործության պատմությանը եւ արդի բնապահպանական խնդիրներին՝ կարեւորելով Եկեղեցիների դերը դրանց հաղթահարման գործում:

ՍԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Սուրիահայ գաղութը, չնայեած Սուրիոյ մէջ տիրող դժուարին պայմաններուն՝զլացաւ կատարելու իր ազգային պարտականութիւնը: Յատուկ պատուիրակութեամբ մը ան իր բողոքը յայտնեց Հունգարիոյ դեսպանին Հայ սպայ Գուրգէն Մարգարեանի սպանութեամբ Հունգարիոյ մէջ ցմահ բանտարկութեան դատապարտուած Ատրպէյճանցի սպայ Ռամիլ Սաֆարոֆին Ատրպէյճանի մէջ ներում ստանալուն եւ հերոսի պատիւին արժանանալուն համար:

Հինգշաբթի, 6 Սեպտեմբեր 2012-ին, Դամասկոսի Համայնքապետերն ու Կուսակցութեանց ներկայացուցիչները այցելեցին Դամասկոսի մէջ հաւատարմագրուած Հունգարիոյ Հանրապետութեան դեսպանութիւն: Պատուիրակութեան մաս կը կազմէին Դամասկոսի Հայոց թեմի առաջնորդ՝ Գերշ. Տ. Արմաշ եպս. Նալպանդեանը, Դամասկոսի Հայ Կաթողիկէ առաջնորդ՝ Արի. Տ. Յովսէփ եպս. Առնաութեանը, Սոցեալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Սուրիոյ Հարաւային Շրջանի Վարիչ Մարմինի Փոխատենապետ՝ Տոքթ. Վազգէն Համալեանը, Ռամկավար Ազատական Կուսակցութեան Դամասկոսի Շրջանակի ատենապետ՝ Տիար Գէորգ Կէօնճեանը, Դամասկոսի Հայ Կաթողիկէ Միութեան ատենապետ՝ Տիար Սարգիս Քէշիշեանը եւ Ազգ. Քաղաքական ժողովի (թեմական խորհուրդ) փոխատենապետ՝ Տիար Աւօ Ոսկեանը:

Պատուիրակութեանը ընդունեց Սուրիոյ մէջ Հունգարիոյ արտակարգ եւ լիազօր դեսպան Եանոշ Պուտայը: Տ. Յովսէփ եւ Տ. Արմաշ Սրբազան Հայրերը յանուն ներկաներուն եւ սուրիահայութեան իրենց բողոքն ու ցասումը յայտնեցին Հունգարիոյ եւ Ատրպէյճանի կառավարութեանց միջեւ կատարուած գործարքին համար, զոր կատարուած է հայ սպայ Գուրգէն Մարգարեանի արեան գնով: Սրբազան Հայրը ի մասնաւորի շեշտեց՝ հայ ժողովուրդը թէ՛ Հայաստանի, թէ՛ սփիւռքի եւ թէ՛ Սուրիոյ մէջ վրդովուած է կատարուածին համար, զայն համարելով Հայու անվտանգութեան խաթարող սահմռկեցուցիչ քայլ: Դեսպան Եանոշ Պուտայը իր հերթին ներկայացուց Հունգարիոյ Պետութեան դիրքորոշումը այդ մասին: Տ. Արմաշ Սրբազան Հայրը ներկաներուն անունով դեսպանին յանձնեց Հունգարիոյ Հանրապետութեան նախագահ՝ Տիար Եանոշ Ատէրին ուղղուած նամակը, որուն մէջ կը պահանջուէր Եւրոպական Միութեան պետութեան մը յարիր կեցուածք եւ դատապարտում Ատրպէյճանի կողմէ անմարդկային եւ հակահայկական քաղաքականութեան նկատմամբ:

ԴԻՒԱՆ ԴԱՄԱՍԿՈՍԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ ԳԵՒՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՒՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ 2012-2013 ԹԹ. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԲԱՑՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Սեպտեմբերի 10-ին տեղի ունեցաւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանի (Ասպվածաբանական համալսարան) 2012-2013 թթ. ուսումնական տարվա բացման արարողությունը՝ մասնակցությամբ Մայր Աթոռի միաբանների, Ճեմարանի դասախոսական կազմի եւ սաների:

Տերունական աղոթքից, Հայաստանի եւ ճեմարանի օրհներգերից հետո բացման խոսքով հանդես եկավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հոգեւոր կրթական հաստատությունների վերատեսուչ Տ. Գեւորգ եպիսկոպոս Սարոյանը: Սրբազանը նշեց, որ ճեմարանը հետեւողականորեն ընթանում է դեպի նպատակակետ՝ դառնալու այնպիսի մի հաստատություն, որը կկարողանա շնորհել բոլոր գիտական աստիճանները, որտեղի շրջանավարտներն այլեւս

Ճեմարանի նոր ուսումնական տարվա բացման արարողությունը

կարիք չեն ունենա արտասահմանյան համալսարաններում վերստին ուսանելու, կզբաղվեն գիտությամբ եւ Հայ Եկեղեցու ժառանգության հարստացմամբ:

Գերաշնորհ Սրբազան Հայրն իր երախտագիտությունը հայտնեց նաեւ ճեմարանի տեսչական, դասախոսական կազմերին եւ ուսանողությանը՝ իրենց անձնվեր, հետեւողական ու անկեղծ աշխատանքի համար՝ մաղթելով տոկուն հավատք եւ սեր՝ առաքելությունը շարունակելու համար:

Հանդիսության ընթացքում ազգային երգերի կատարումներով եւ ասմունքով հանդես եկան Ճեմարանի սաները, որից հետո Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանության անունից օրհնության խոսք ասաց Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանը: Շնորհավորելով ամենքին նոր ուսումնական տարվա բացման առիթով՝ Սրբազան Հայրը Ճեմարանին մաղթեց անսպառ եռանդ, նոր ձեռքբերումներ ու հաջողություններ:

Այս տարի Գեւորգյան հոգեւոր ճեմարան է ընդունվել 22 սան: Ուսանողության ընդհանուր թիվը կազմում է 129 հոգի: Ճեմարանում դասավանդում եմ 19 եկեղեցական եւ 34 աշխարհական դասախոսներ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԽԱՉՎԵՐԱՑԻ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Սեպտեմբերի 16-ին Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին մեծ հանդիսավորությամբ տոնախմբեց հինգ տաղավար տոներից վերջինը՝ Խաչվերացը, որը նվիրված է գերությունից խաչի վերադարձի, նրա բարձրացման եւ փառաբանության պատմական հիշատակին:

Տոնի առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ս. Պատարագ մատուցեց Մայր Աթոռի լուսարարապետ Տ. Հովնան եպիսկոպոս Հակոբյանը: Սրբազան Հայրն իր քարոզում անդրադարձավ խաչի սրբազան խորհրդին: Խոսքի ավարտին Սրբազան Հայրը պատգամեց նախնիների օրինակով արժանավայել կրել խաչը մեր ժամանակներում՝ չմոռանալով, որ խաչի ճանապարհը տանում է դեպի փրկություն:

Նույն օրը՝ երեկոյան ժամերգության ավարտին, տեղի ունեցավ խաչի հանդիսավոր թափոր՝ հանդիսապետությամբ Մայր Աթոռի Վանական խորհրդի նախագահ եւ հրատարակչական բաժնի տնօրեն Տ. Նաթան արքեպիսկոպոս Հովհաննիսյանի: Եկեղեցականաց թափորի ուղեկցությամբ Մայր Տաճարից դուրս բերվեց Տիրոջ Խաչափայտի նվիրական մասունքը՝ ամփոփված ոսկեհանով ու ծաղիկներով զարդարված ճաճանչավոր մեծ խաչի մեջ: Հանդիսավոր կերպով մասունքն առաջնորդվեց Միածնաէջ տաճարի չորս կողմերը եւ Անդաստանի արարողությամբ օրհնություն բաշխվեց աշխարհի չորս ծագերին: Անդաստանի արարողությունից հետո ճաճանչը զարդարող ծաղիկները միաբան սարկավագները բաժանեցին հավատավոր ժողովրդին:

Հաջորդ օրը՝ Մեռելոցին, Մայր Տաճարում մատուցվեց Ս. Պատարագ, որի ավարտին կատարվեց հոգեհանգստյան արարողություն՝ ննջեցյալ հոգիների խաղաղության ու հանգստության համար:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԶՈՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ

Սեպտեմբեր 13-ից 14-ը Հունաստանի Կրետե կղզում գումարվեց Եկեղեցիների Եվրոպական Կոնֆերանսի Կենտրոնական կոմիտեի պարբեկան ժողովը:

Ժողովի ընթացքում ի շարս այլ հարցերի քննարկվեց նաեւ Հունգարիայի կողմից Ադրբեջանի ԶՈՒ սպա Ռամիլ Սաֆարովի արտահանձնման եւ Ադրբեջանում ազատ արձակման հարցը:

ԵԵԿ Կենտրոնական կոմիտեի անդամները ցավ են արտահայտել Ադրբեջանի նախագահի կողմից հանցագործին շնորհված անհարդուրժելի ներման կապակցությամբ՝ իրենց համերաշխությունն ու զորակցությունը հայտնելով հայ ժողովրդին եւ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն՝ աղոթելով, որ արդարությունը հաստատվի եւ ազգերի միջեւ թագավորեն խաղաղությունն ու փոխըմբռնումը: Այս առնչությամբ Կենտրոնական կոմիտեն պաշտոնական գրություն է ուղղել Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսին:

Ցավալի իրողության առիթով հայ ժողովրդին իր զորակցությունն է հայտնել նաեւ Հնդիկ Մալանկարա Եկեղեցու պետ Նորին Սրբություն Բասիլիոս Մարթովմա Պողոս Երկրորդը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ «Ս. ԹՈՎՄԱ ԱՔՎԻՆԱՑԻ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Սեպտեմբերի 19-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Ս. Թովմա Աքվինացի» համալսարանի (Մինեսոթա, ԱՄՆ) նախագահ հայր Դեննիս Դիսին եւ հոգաբարձուների խորհրդի անդամներին:

Ողջունելով «Ս. Թովմա Աքվինացի» համալսարանի ներկայացուցչական խմբի այցը Հայաստան՝ Վեհափառ Հայրապետն իր գնահատանքը հայտնեց համալսարանի փնօրինությանը եւ հոգաբարձուներին՝ կրթական ոլորտում կարեւոր եւ պատասխանատու առաքելություն ստանձնելու համար:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը նաեւ գոհունակություն հայտնեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եւ համալսարանի միջեւ Գաֆեսճյան ընտանիքի ջանքերի շնորհիվ ձեւավորված սերտ համագործակցության առիթով, որի արդյունքում Մայր Աթոռի երկու միաբաններ առիթ են ունեցել իրենց ուսումնառությունը շարունակելու «Ս. Թովմա Աքվինացի» համալսարանում: Նորին Սրբությունը տեղեկացրեց, որ վերջին պասնամյակում պարբեր Եկեղեցիների աջակցությամբ Մայր Աթոռից շուրջ քառասուն եկեղեցականներ կրթություն են ստացել արտերկրի համալսարաններում եւ բարձրագույն կրթական հոգեւոր հաստատություններում՝ մասնագիտանալով կրոնական-աստվածաբանական պարբեր առարկաների մեջ:

Իր խոսքում «Ս. Թովմա Աքվինացի» համալսարանի նախագահն ուրախություն հայտնեց համալսարանում հայ եկեղեցականների ուսումնառության առիթով՝ վստահեցնելով, որ համագործակցությունը Հայոց Եկեղեցու հետ ապագային ավելի կզորանա:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԲՈՒԵՆՈՍ ԱՅՐԵՍԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԵՒ ԱՎՍՏՐԱԼԻԱՅԻ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՃԵՄԱՐԱՆԻ ՍԱՆԵՐԻՆ

Սեպտեմբերի 19-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Բուենոս Այրեսի Մխիթարյան վարժարանի եւ Ավստրալիայի Համազգային «Արշակ եւ Սոֆի Գոլդն» ճեմարանի սաներին:

Վեհափառ Հայրապետն ուրախությամբ ողջունեց Արգենտինայի եւ Ավստրալիայի հայկական դպրոցների սաներին՝ նշելով, որ գեղեցիկ ավանդույթ է դարձել ամեն տարի Հայաստան եւ Մայր Աթոռ ուխտագնացություն կազմակերպելը:

Նորին Սրբությունը սփյուռքահայ երիտասարդների կյանքում կարեւորեց Հայրենիք այցելությունների դերակատարությունը, քանի որ դրանց շնորհիվ հայորդիները հաղորդ են դառնում հայրենի իրականությանը, իրենց աչքերով տեսնում հոգեւոր-ազգային այն արժեքները, որոնց մասին սովորել են դպրոցում: Ամենայն Հայոց Հայրապետի համոզմամբ՝ հայրենի արժեքների հետ անմիջական հաղորդակցությունը ամրացնում է սաների ազգային ոգին, գիտակցությունն ու նախանձախնդրությունը՝ շարունակելու ապրել որպես հայ ազգի զավակ:

Հանդիպման ավարտին Նորին Սրբությունն իր գնահատանքը բերեց երկու դպրոցների մանկավարժներին, հոգաբարձուներին եւ ղեկավարներին՝ հաստատություններում կրթության որակը բարձր պահելու նախանձախնդրության եւ սաներին հայեցի դաստիարակելու համար:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԺԱՄԱՆԵՑ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Սեպտեմբերի 20-ին Հայաստան ժամանեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա« Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսը՝ Հայոց Ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովի նիստին մասնակցելու նպատակով:

Օդանավակայանում Արամ Ա« Կաթողիկոսին դիմավորեցին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանը, Մայր Աթոռի հրատարակչական բաժնի տնօրեն Տ. Նաթան արքեպիսկոպոս Հովհաննիսյանը, Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանը, փոխդիվանապետ Տ. Մեսրոպ վարդապետ Պարսամյանը, Տ. Անդրանիկ աբեղա Գեւորգյանը, Տ. Սամվել աբեղա Միխիթարյանը:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Արամ Ա. Կաթողիկոսին դիմավորեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ապա Մայր Տաճարում կատարվեց միասնական գոհաբանական աղոթք:

Աղոթքից հետո Ամենայն Հայոց Հայրապետը բարիգալատյան խոսքով ողջունեց Արամ Ա. Կաթողիկոսին՝ փառք ու գոհություն հայտնելով Ատծուն, որ առիթներ է պարգեւում հանդիպելու եւ առ Ատված համատեղ աղոթք բարձրացնելու հայ ժողովրդի ապահով ու բարօր

կյանքի, Հայրենիքի շինության ու առաջընթացի համար, ինչպես նաեւ անդրադարձ կատարելու ազգային կյանքը հուզող հարցերին ու խնդիրներին:

Նորին Սրբությունը գոհունակություն հայտնեց Հայոց Ցեղասպանության 100-րդ տարելիցի պետական հանձնաժողովի աշխատանքներին համատեղ մասնակցության համար՝ կարեւորելով Հայոց Ցեղասպանության համընդհանուր ճանաչմանն ու դատապարտմանը եւ մարդկային կյանքում նման ոճիրների կանխարգելմանն ուղղված ջանքերը, որպեսզի լուծում գտնի մեր ժողովրդի արդար դատը, որ հարյուրամյակ շարունակ յուրաքանչյուր հայորդու պայքարն է դարձել:

Գարեգին Բ. Կաթողիկոսը նաեւ ցավով անդրադարձավ Հունգարիայի իշխանությունների կողմից ադրբեջանցի սպահակին արտահանձնման եւ Ադրբեջանի նախագահի կողմից մարդասպանին շնորհված ներման իրողությանը, ինչպես նաեւ Սիրիայում շարունակվող ռազմական գործողություններին, որոնց զոհ են դառնում բազմաթիվ անմեղ քաղաքացիներ: «Արդարեւ, մեր հոգին տագնապի ու ցավի մեջ է, որովհետեւ սիրիահայ բազում մեր զավակներ զոհ դարձան պատերազմական այս գործողությունների ընթացքում, շատերն ապրում են անորոշության մեջ՝ վախն իրենց սրտում, ուրիշներ գաղթական դարձան աշխարհով մեկ: Մենք փառք ենք տալիս Աստծուն, որ այսօր մենք հայրենի պետականություն ունենք, որը հարազատ զավակների համար դժվարին պահերին միշտ նրանց կողքին է, նեցուկ ու ապավեն նրանց»,-ասաց Վեհափառ Հայրապետը՝ նշելով, որ Եկեղեցին նույնպես ամեն ճիգ ու ջանք ի գործ դրեց եւ շարունակում է՝ օգնելու դժվարության մեջ հեծող իր զավակներին: Նորին Սրբությունը, աղոթք բարձրացնելով անմեղ զոհվածների հոգիների եւ աշխարհում խաղաղության համար, մաղթեց, որպեսզի բնականոն ու խաղաղ կյանքը վերահաստատվի Սիրիայում եւ հայ համայնքը շարունակի ապրել այնտեղ՝ հավատարիմ իր դարավոր ազգային արժեքներին ու սրբություններին:

Խոսքի վերջում վերստին ողջունելով եւ իր բարեմաղթանքներն ուղղելով Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսին ու միաբանությանը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մաղթեց, որ Երկնավոր Տերն Իր Աջն ու օրհնությունը հովանավոր դարձնի Հայոց Եկեղեցու նվիրապետական աթոռների վրա, որպեսզի միասնական ջանքերով Հայոց Եկեղեցին լծվի իր առաքելության իրականացմանը մեր ազգային կյանքում՝ կերտելով մեր ժողովրդի լավատեսության ոգին:

Այնուհետեւ Հայաստան եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին իր այցին անդրադարձավ Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսը: «Մեր Եկեղեցու գոյության պատճառը, մեր Եկեղեցու կյանքի ու վկայության ճամփան, մեր Եկեղեցու առաքելությունը միայն մեկ բառի մեջ կարելի է խտացնել՝ ծառայություն: Եվ այս բառը մեր Եկեղեցու պատմության ընթացքում գործնականապես արտահայտված է մեր Եկեղեցու կենդանի ու արյան վկայությամբ, մեր Եկեղեցու հոգեմտավոր ստեղծագործությամբ, մեր Եկեղեցու՝ Հայրենիքի ու ժողովրդի համայնական կյանքի մեջ իր գործուն մասնակցությամբ», - ընդգծեց Արամ Ա Կաթողիկոսը՝ իր այցն առիթ նկատելով ծառայական ուխտի վերանորոգման:

Խոսելով վերջին շրջանում ազգային կյանքը հուզող երեւույթների մասին՝ Արամ Ա Կաթողիկոսը մասնավորապես ասաց. «Երբ Ադրբեջանը, բարոյական, իրավական, քաղաքական, մարդկային ամեն տեսակ օրենք ու հասկացողություն մի կողմ դնելով, փառքով ու պատվով ընդունեց ոճրագործին, մեր Եկեղեցին պետության կողքին եղավ, մեր Եկեղեցին չէր կարող անտարբեր լինել: Երբ սիրիահայությունն այսօր տագնապի է մատնված, մեր Եկեղեցին անտարբեր չմնաց: Եվ ահավասիկ, երբ մենք գտնվում ենք ցեղասպանության հարյու-

Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա. Կաթողիկոսիկոսը Մայր Աթոռում

ռամյակի շեմին, Եկեղեցին չի կարող լուռ ու հետեւողի դերի մեջ լինել: Մեր պետության հետ միասին մենք անելիք ունենք»:

Վերջում Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսը մաղթեց, որ միշտ շեն ու պայծառ մնա Մայր Աթոռ Սբ Էջմիածինն իր միաբանությամբ ու բոլոր կառույցներով:

Արարողությունն ավարտվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի օրհնությամբ ու միասնական տերունական աղոթքով:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ Է

Սեպտեմբերի 19-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում տեղի ունեցավ Մայր Աթոռի Միջեկեղեցական-ատրվածաբանական խորհրդի նիստ: Ժողովի ընթացքում քննության առնվեցին Մայր Աթոռի միջեկեղեցական եւ միջկրոնական հարաբերություններին վերաբերող հարցեր: Անդրադառնալով վերջին օրերին միջազգային հանրության կյանքն ալեկոծած «Մահմեդականների անմեղությունը» ֆիլմին՝ խորհուրդը հանդես եկավ հայտարարությամբ.

«Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին խստորեն դատապարտում է «Մահմեդականների անմեղությունը» ֆիլմի ստեղծումն ու տարածումը, որն առիթ տվեց մի շարք երկրներում կրոնական անհանդուրժողականության ցավալի դրսեւորումների ու բռնարարքների, որոնց հետեւանքով եղան մարդկային զոհեր: Դատապարտելի են կրոնական հողի վրա նման սադրիչ երեւույթները, որոնք չեն նպաստում ժողովուրդների կյանքում միջկրոնական հանդուրժողականության եւ խաղաղ ու համերաշխ համակեցության մթնոլորտի ձեւավորմանը: Կրոնն ու հավատը երբեք չպետք է դարձվեն բռնության գործիք, «որովհետեւ Աստուած խռովության Աստվածը չէ, այլ՝ խաղաղության (Ա. Կոր. ԺԴ. 3)»:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Սեպտեմբերի 21-ին, Հայաստանի Հանրապետության Անկախության 21-րդ ամյակի առիթով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցավ Հանրապետական մաղթանքի արարողություն:

Եկեղեցականների թափորը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսին ուղեկցեց Մայր տաճար, որտեղ Իջման Ս. Սեղանի առջեւ կատարվեց գոհաբանական մաղթանք:

Արարողության ընթացքում սուրբգրային ընթերցումներից հետո Վեհափառ Հայրապետը ծնրադիր ընթերցեց «Գոհանամք զքէն» աղոթքը՝ Աստծուց հայցելով անսասանություն, պայծառություն ու բարօրություն հայոց անկախ պետության համար: Այնուհետեւ եկեղեցական դասն օրհնությամբ մաղթեց, որ Աստված իր Ամենախնամ Ս. Աջի հովանու ներքո պահի ու պահպանի Հայաստանի Հանրապետությունը:

Հանրապետական մաղթանքի ավարտին Նորին Սրբությունն իր պատգամը բերեց համայն հայ ժողովրդին: Անդրադառնալով անկախության 21 տարիների ընթացքում հայ ժո-

ղովրդի կրած դժվարություններին՝ Վեհափառ Հայրապետը նշեց, որ, հակառակ բոլոր փորձություններին, երբեք չընկճվեց հայորդու ազատասիրության ոգին, եւ հայ ժողովուրդը շարունակեց տոկալ հայրենիքի ու պետության համար իր պայքարում: Իր խոսքն ուղղելով ինչպես հայրենիքում, այնպես էլ սփյուռքում ապրող հայ ժողովրդի զավակներին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ասաց, որ պետք է միասնական կամքով կերտել մեր երազների հայրենիքը, որը պիտի լինի յուրաքանչյուր հայորդու հպարտությունը եւ յուրաքանչյուր հայ զավակի տունը: Նորին Սրբությունը հորդորեց չտկարանալ ներկայիս կյանքի դժվարությունների առջեւ, զորեղ պահել հողի ու հայրենիքի հանդեպ սերը, որն անպարտելի ուժ է եւ կարող՝ շենություն բերել մեր հայրենիքին, հայ օջախներին ու հայ կյանքին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՕԾՎԵՑ ԾՈՎԻՆԱՐԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ

Սեպտեմբերի 22-ին Գեղարքունյաց թեմի Ծովինար համայնքի հավատացյալ ժողովրդի կյանքում կատարվեց վաղուց սպասվածը՝ օծվեց համայնքի Ս. Աստվածածին եկեղեցին: Եկեղեցին կառուցվել էր 1900 թ. Մուշից ներգաղթած ժողովրդի կողմից: Խորհրդային տարիներին այն վերածվել էր թունաքիմիկատների պահեստի, որի հետեւանքով անհնարին էր դառնում եկեղեցում երկար գտնվելը: Այս տարվա ընթացքում եկեղեցին հիմնովին վերակառուցվեց նույն ոճով՝ վերականգնման կանոնների համաձայն:

Եկեղեցու օծումը կատարեց թեմական առաջնորդ Տ. Մարկոս եպիսկոպոս Հովհաննիսյանը: Հավարտ արարողության եկեղեցու բարերար, ՀՀ ԱԺ պատգամավոր տիար Հակոբ Հակոբյանին Սրբազան Հայրը փախանցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի Օրհնության գիրը եւ Հայ Եկեղեցու բարձրագույն պարգեւ՝ «Ս. Գրիգոր Լուսավորիչ» շքանշանը:

Օծման հանդիսությանը ներկա էին ՀՀ Գլխավոր դատախազ Ա. Հովսեփյանը, մարզային իշխանությունների ներկայացուցիչներ եւ հազարավոր ծովինարցիներ:

ԳԵՂԱՐՔՈՒՆՅԱՅ ԹԵՄԻ
ՄԱՄԼՈ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ԳԵՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԸ ՏՈՆԱԽՄԲԵՑ ԻՐ 138-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ

Սեպտեմբերի 29-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում մեծ հանդիսավորությամբ նշվեց Ս. Գեւորգ զորավարի տոնը:

Տոնի առիթով Մայր Տաճարում Ս. Պատարագ մատուցեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հոգեւոր կրթական հաստատությունների վերատեսուչ Տ. Գեւորգ եպիսկոպոս Սարոյանը: Արարողության ընթացքում պատարագիչ Սրբազանը հավուր պատշաճի քարոզ խոսեց՝ անդրադառնալով համաքրիստոնեական մեծ սրբի վկայաբանությանը:

Իր խոսքում Գեւորգ Սրբազանը տեղեկացրեց, որ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ այսուհետ կվերականգնվի Ս. Գեւորգի տոնին Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տարեդարձը նշելու ավանդույթը:

Ս. Պատարագի արարողությունից հետո տոնի առիթով ճեմարանի հանդիսությունն-

րի սրահում Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ տեղի ունեցավ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի 138-րդ տարեդարձին նվիրված հանդիսություն: Այն սկսվեց Տերունական աղոթքով, որին հաջորդեցին ՀՀ եւ ԳՀՃ օրհներգերը: Այնուհետեւ սամունքով, ազգային եւ հոգեւոր երգերի կատարումներով հանդես եկան ճեմարանի սաները:

Հանդիսության վերջում ներկաներին իր հայրական օրհնությունը բերեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Ուրախություն հայտնելով նվիրական տոնի առիթով՝ Նորին Սրբությունն անդրադարձավ լուսամիտ Գեւորգ Հայրապետի՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում հոգեւոր-կրթական հաստատությունը վերահաստատելու տեսիլքին: Նորին Սրբությունը խորհրդանշական նկատեց ճեմարանը Ս. Գեւորգ զորավարի անունով կոչելը, որպեսզի ապագա եկեղեցականներն իրենց առաջնորդող ունենան Ս. Գեւորգ զորավարի անձը, Տիրոջը ամբողջանվեր ու անձնազոհ հավատարմության խորհուրդը: «Այս ոգին է, որ մենք ցանկանում ենք կրթել ու կերտել մեր հոգեւոր-կրթական հաստատություններում, որպեսզի այդ կրթօջախների հարկի ներքո ուսում առնող յուրաքանչյուր անձ ունենա զորեղ հավատք եւ հավատարմության ու նվիրումի ոգի, ի պահաջել հարկին նահատակության պսակը վերցնի, ինչպես մեր հայրերը՝ հանուն Քրիստոսի ու սուրբ հավատքի»,- ասաց Հայոց Հայրապետը՝ հորդորելով այս տոնին մեկ անգամ եւս անդրադառնալ հոգեւորականի կոչմանը եւ առաքելությանը, որպեսզի Ս. Գեւորգ զորավարի օրինակով կերտվի ոգին, զորանա մեր հավատքը, պայծառանա մեր առաքելության տեսիլքը:

Գարեգին Բ. Կաթողիկոսը հորդորեց ըստ ամենայնի նմանվել եկեղեցական պատմության ընթացքում Հայոց Եկեղեցին շենացրած լուսավոր կերպարներին, որոնցից մեկն է նաեւ Գեւորգ Դ. Հայրապետը՝ գոհունակությամբ ընդգծելով, որ այսօր էլ կան ազգի եւ եկեղեցու բազում արժանի, անձնուրաց, ազգասեր, հայրենանվեր, Քրիստոսի սիրով ապրող եւ գործող սպասավորներ:

Ծնորհավորելով Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսչությանը, դասախոսներին եւ սաներին՝ Վեհափառ Հայրապետը աղոթքով մաղթեց, որ Երկնավոր Տերը միշտ օրհնյալ պահի հիշատակը հաստատության հիմնադիր լուսահոգի Հայրապետի եւ զորացնի ճեմարանն իր առաքելության մեջ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ